ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԿՈՒՐԹԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կուրթան համայնք,
գ. Կուրթան , Հեռ. (0256)6-19-99
«26» դեկտեմբերի 2016թ. թիվ 158

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Կից ուղարկում ենք Կուրթան համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 23-ի թիվ 11 նիստի թիվ 45-48 որոշումները:

Առդիր 25թերթ 1Excel ֆայլ:

Համայնքի ղեկավար /Մ.Գևորգյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԿՈՒՐԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կուրթան համայնք,
հասցե՝ ՀՀ Լոռու մարզ գ.Կուրթան,
Հեռախոս՝ 025661999, Էլ.Փոստ՝ kurtan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» դեկտեմբերի 2016 թվականի N 45

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասը՝ Կուրթան համայնքի ավագանին որոշեց.

Հաստատել Կուրթան համայնքի նորընտիր ավագանու 2016թ.դեկտեմբերի 23-ի թիվ 11 նիստի օրակարգը՝

1.Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

2. Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

3. Կուրթան համայքի 2017-2021թթ. զարգացման հնգամյա ծրագիրը հաստատելու մասին:

Ավագանու անդամներ	Կողմ /6/	Դեմ /0/	Ձեռնպահ /0/
Գևորգյան Վարդան			
Դանիելյան Գարիկ			
Դավթյան Վահե			
Դարբինյան Էդգար			
Հարությունյան Հմայակ			
Մազթաղյան Գնել			

Համայնքի ղեկավար՝ /Մ. Գևորգյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԿՈՒՐԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կուրթան համայնք,
հասցե՝ ՀՀ Լոռու մարզ գ.Կուրթան,
Հեռախոս՝ 0256661999, Էլ.Փոստ՝ kurtan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» դեկտեմբերի 2016 թվականի N 46

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, համայնքի ավագանու 2014 թվականի դեկեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Կուրթան համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 52-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները, համայնքի ղեկավարի առաջարկությունը և համայնքի պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, նորածիններ ունեցող ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Կուրթան համայնքի ավագանին որոշում է.

11.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները, համայնքի բյուջեից

ա/ Հարազատին կորցրած յոթ ընտանիքների հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն թիվ 01 հավելվածի:

բ/ Սոցիալապես անապահով մեկ ընտանիքի հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն թիվ02 հավելվածի:

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ /6/	Դեմ /0/	Ձեռնպահ /0/
Գևորգյան Վարդան			
Դանիելյան Գարիկ			
Դավթյան Վահե			
Դարբինյան Էդգար			
Հարությունյան Համլետ			
Մագթաղյան Գնել			

Համայնքի ղեկավար՝ /Մ. Գևորգյան/

Հավելված թիվ 01
ՀՀ Լոռու մարզի
Կուրթան համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 23-ի N 46 որոշման

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿՈՒՐԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՀԱՐԱԶԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

Հ/Հ	Ազգանուն Անուն	գումարի չափը/ՀՀ դրամ/
1	Մագթաղյան Վազգեն Ս.	քսանհինգ հազար
2	Նալբանդյան Բաբկեն	քսանհինգ հազար
3	Գևորգյան Սեյրան	քսանհինգ հազար
4	Բուլղադարյան Թերեզա	քսանհինգ հազար
5	Առաքելյան Սամվել	քսանհինգ հազար
6	Գևորգյան Խալաթ	քսանհինգ հազար
7	Նալբանդյան Վերա	քսանհինգ հազար
ԸՆԴԱՄԵՆԸ՝ մեկ հարյուր յոթանասունհինգ հազար դրամ:		

ԿՈՒՐԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ Թամարա Գրիգորյան
(ստորագրություն)

ԿՈՒՐԹԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ * ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ * 06400981

Հավելված թիվ02
ՀՀ Լոռու մարզի
Կուրթան համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի **23-ի N46 որոշման**

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿՈՒՐԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

Հ/Հ	Ազգանուն Անուն	գումարի չափը/ՀՀ դրամ/
1	Հարությունյան Մարիամ	հիսուն հազար
ԸՆԴԱՄԵՆԸ՝ հիսուն հազար դրամ:		

ԿՈՒՐԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ Թամարա Գրիգորյան

(ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԿՈՒՐԹԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կուրթան համայնք,
հասցե՝ ՀՀ Լոռու մարզ գ.Կուրթան,
Հեռախոս՝ 0256661999, Էլ.Փոստ՝ kurtan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» դեկտեմբերի 2016 թվականի N 47

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառարավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին>> թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17 կետի պահանջների համաձայն, հիմք ընդունելով <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>> 07.12.2016թ, թիվ 97 դրական եզրակացությունը, համայնքի ավագնին, որոշում է.

1. Լոռու մարզի Կուրթան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերից 06-057-0124-0001 կադաստրային ծածկագրով 0,1405 հա հողամաս փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ կոմունալ օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ ապահովել իրավունքների պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեուում և համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ /6/	Դեմ /0/	Ձեռնպահ /0/
Գևորգյան Վարդան			
Դանիելյան Գարիկ			
Դավթյան Վահե			
Դարբինյան Էդգար			
Հարությունյան Հմայակ			
Մագթաղյան Գնել			

Կուրթան համայնքի ղեկավար Մ. Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԿՈՒՐԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Կուրթան համայնք,
Լոռու մարզ գյուղ Կուրթան
Հեռախոս՝ 025661999, Էլ.Փոստ՝ kurtan.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«23» դեկտեմբերի 2016 թվականի N 48

ԿՈՒՐԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետը, Կուրթան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Կուրթան համայնքի 2017-2021թթ. զարգացման հնգամյա ծրագիրը համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ	Կողմ /6/	Դեմ /0/	Ձեռնպահ /0/
Գևորգյան Վարդան			
Դանիելյան Գարիկ			
Դավթյան Վահե			
Դարբինյան Էդգար			
Հարությունյան Հմայակ			
Մագթաղյան Գնել			

Համայնքի ղեկավար՝ /Մ. Գևորգյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԿՈՒՐԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաստատվել է՝ համայնքի ավագանու <<23>> դեկտեմբերի2016թ. թիվ 48 որոշմամբ

Կուրթան 2016թ.

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք 2-3

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն 4

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն 4

2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը 5-6

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը 6

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները6

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ 7

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն 8-9

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում 9

3.1. Համայնքի զարգացման տեսլական.....9

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ 10

4. ՀՀՌԾ ֆինանսավորում 11

5. ՀՀՌԾ մոնիթորինգ..... 11

6. Ծրագրերի անձնագրեր.....12-18

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Սիրով ողջունում եմ Կուրթան համայնքի ազգաբնակչությանը և բոլոր նրանց ովքեր հետաքրքրված են Կուրթան համայնքի անցուդարձով, կատարվող ծրագրերով , այս հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված ծրագրերի իրականացումով, որոնք վեր են հանվել բազմաթիվ քննարկումների ընթացքում:

Հուսով եմ ,որ սատար կկանգնեք, որպեսզի կարողանանք իրականցնել մեր առջև դրված խնդիրները , համայնքը դարձնել բարեկեցիկ և զարգացած համայնք:

Կանխավ շնորհակալ եմ բոլոր այն գործարարներին,համայնքաբնակներին և շահագրգիռ կազմակերպություններին և անհատներին,որոնք կօգնեն համայնքի զարգացման ծրագրերի ինականացմանը,հասարակական կյանքի ակտիվացման գործնթացներին:

Գալիք հինգ տարում համայնքի զարգացման ծրագրային հիմնական ուղղություններն են

- *Բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակը*
- *Համայնքում զարգացնել գյուղատնտեսությունը*
- *Հատուկ ուշադրություն դարձնել կրթությանը, մշակույթի զարգացմանը*
- *Միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.*
- *Բարելավել համայնքի ֆինանսական կարողությունը*
- *Նպատակային օգտագործել համայնքային բյուջեի միջոցները*
- *Բարձրացնել բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակը*
- *Նոր աշխատատեղերի ստեղծում*

Համայնքում առկա հիմնախնդիրները

- *Բնակչության սոցիալապես անապահով վիճակ /25%-30%/*
- *Առկա գյուղատնտեսական տեխնիկայի և գործիքների մաշվածություն*
- *Փոքր հողակտորների և ոչ ճիշտ օգտագործման արդյունքում ուժասպառված հողերը*
- *Ոռոգման ջրի բացակայություն:*
- *Խմելու ջրի արտաքին և ներքին ցանցերի մաշվածության / նոր ջրագծի կառուցում/*
- *Արոտավայրերի ճանապարհների անմխիթար վիճակ,բացակայություն-*
- *Աշխատատեղերի բացակայություն*
- *Ներհամայնքային ճանապարհներ և գիշերային լուսավորության կառուցում*

Լուծման ուղիները

- *Օրենքների փոփոխություններ*
- *Լրացուցիչ ֆինանսական միջոցների ներկրում*
- *Կոոպերատիվների ստեղծում և ընդլայնում*
- *Աշխատատեղերի ստեղծում*
- *Իրավագիտական ծառայությունների մատուցում*
- *Գովազդ*
- *Հանրային մասնակցություն*

Գյուղացիները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ՝
ա/ հաճախակի են լինում երաշտի տարիներ, որից գյուղացիները կորցնում են բերքի 50%-ը,
բ/ նրանք բավարարված չեն ոռոգման ջրով, իսկ նրանց ապրուստի հիմնական միջոցն ստացվում է կարտոֆիլից և ցորենից:

գ/ Գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների:

Համայնքի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ):

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը մշակվում է ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով և այլ օրենսդրական ակտերով:

Այն մշակվում է համայնքի ղեկավարի, աշխատակազմի, ավագանու, բնակչության, հանձնաժողովների և ՀԿ –ների կողմից արված առաջարկությունների և քննարկումների հիման վրա, որը հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ:

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Համայնքի ընդհանուր նկարագրությունը՝

ՀՀ Լոռու մարզի Կուրթան համայնքը գտնվում է Ձորագետ և Գարգառ գետերի միախառնման հետևանքով առաջացած բարձրադիր հարթության վրա՝ ծովի մակերևույթից 981-1600մ բարձրության վրա:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 2093,0 հա, իսկ բնակավայրը՝ 126,0հա:Համայնքը սահմանակից է Վարդաբլուր,Անտառամուտ, Ձորագյուղ համայնքներին, իսկ Արևածագ, Կարմիր Աղեգի և Կողես համայնքներից անջրպետվում է Ձորագետի 100-120մ խորության կիրճով: Կլիմայական շրջանացմամբ համայնքը գտնվում է Լոռի-Փամբակի չափավոր տաք, խոնավ գոտում:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կուրթան համայնքի բնակչությունը 2016թ. հունվարի 01-ի դրությամբ կազմում է 2026 /467 ծուխ/, որից՝ 1053 տղամարդ,973 կին:

	բնակչության բաշխումն ըստ սեռի և տարիքի									
բնակչության թվաքանակը	0-4	5-7	8-14	15	0-15	16	17	18	16-62	63-ից բարձր
ընդամենը	102	78	134	16	330	19	17	25	1438	252
տղամարդիկ	62	39	76	9	186	8	11	18	720	111
կանայք	40	39	58	7	144	11	6	7	718	141

Համայնքում փախստականներ չկան:

3. Բնակչության սոցիալական կազմը

Թոշակառուներ -252

Միակողմանի ծնողազուրկ երեխաներ -6
Հաշմանդամներ -85
Աշխատունակներ - 1400
Սոցիալական նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ - 130
Զոհվածների ընտանիքներ - 3

Համայնքի հողատարածքը

	ՀՀ Լոռու մարզի Կուրթան համայնքի հիմնական հողային ռեսուսները	հա
1.	*Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը որից՝*	2092,83
2.	*Բնակավայրի հողեր*	163,75
3.	*Գյուղատնտեսական նշանակության հողեր*	1454,46
4.	*Անտառային հողեր*	388,81
5.	*Արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական հշանակության հողեր*	21,14
6.	*Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր*	9,37
7.	*Հատուկ պահպանվող տարածքների հողեր*	28,34
8.	*Ջրային հողեր*	26,96

2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

Նկարագրել համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակն, անդրադառնալով հետևյալ հարցերին.

- *Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն- 45083,5հազ. դրամ*
- *ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը - 27 (%),*
- *Համայնքի տարածքում առկա են հետևյալ արդյունաբերական ձեռնարկությունները՝*
  Քարի արդյունահանում 1 - գործող
  Ասֆալտ բետոնի գործարան 1 – գործող
- *Համայնքի տարածքում ծառայությունների բնագավառի ձեռնարկութուններն են՝*
- *Խանութներ-8 զբաղված են առևտրով*
  Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքներն են հանդիսանում կարտոֆիլը, ցորենը, միսը, կաթը, բանջարաբոստանային կուլտուրաները, պտուղները:

անվանում	*հեկտարկ*	*Արտադրանքի ցենտներ*	*Իրացման շուկա*
Ցորեն	*320*	*17600*	*ՀՀ շուկա*
Կարտոֆիլ	*210*	*52500*	*ՀՀ շուկա*
Բանջ.բոստ. կուլտուրաներ	*66*	*5140*	*ՀՀ շուկա*
Պտուղ	*20*	*170*	*ՀՀ շուկա*
Կերային կուլտուրաներ	*205*	*11200*	*ՀՀ շուկա*

Դրանց հիմնական սպառման շուկաներն են *Վանաձորը , Արարատյան դաշտավայրը:*
Անասնապահություն. Արտադրվող հիմնական մթերքնեն են՝ կաթ, միս,բուրդ

անվանում	*ցենտներ*	*Իրացման շուկա*
Կաթ	*73200*	*ՀՀ շուկա*
Միս	*78500*	*ՀՀ շուկա*
Բուրդ	*87*	*ՀՀ շուկա*

- ***զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող բնական, պատմական և մշակութային հուշարձաններ,***
  Համայնքում զբոսաշրջային հետաքրքրություն են ներկայացնում 7-9-րդ դարերի Հնեվանքի վանքային համալիրի վերանորոգված երկու եկեղեցիները, 5-րդ դարի Սուրբ Աստվածածին բազիլիկ եկեղեցին՝ 19-րդ դարի զանգակատնով, Գետեվանի և Գոմերի եկեղեցիները, գերեզմանոցի մատուռը և խաչքարերը, Սուրբ Գորգնի հուշաքարը, Անդրանիկի հուշաքարը, Անաստաս Միկոյանի քարե հուշարձանը, Սուրբ Նինայի խաչքարը, ՈՒրարտական ամրոցը, Թուրվանդա ժայռափոր մատուռը, սառցատան աղբյուրը, Սուրբ Սարգիս ուխտավայրը՝ միջնադարյան ամրոցով և սրբատաշ քարով կառուցված եկեղեցով և մատուռով, ինչպես նաև համայքի թանգարանը:
  դպրոցական, նախադպրոցական և արտադրպրոցական կրթական հաստատություններ,
  Համայնքն ունի մեկ միջնակարգ դպրոց/միահերթ/,159 սովորողով, 26 ուսուցիչներով: Դպրոցի տիպային շենքը շահագործվել է 1984 թվականի սեպտեմբերին և ամրացվել է 1996թ., իսկ 1996-2000թթ. վերանորոգվել է նաև մարզադահլիճն ու երկու մասնաշենքերն իրար միացնող միջանցք- հատվածը: Դպրոցն ունի գրադարան 5000 գրքային և 5300 դասագրքային հնացած և բարոյապես մաշված ֆոնդով, արհեստանոցում առկա են 8 խառատային և հղկման դազգահներ: Դպրոցում գործում է Ինտերնետ Համակարգչային Կենտրոն /8 հա-

մակարգիչ և 1 պատճենահան/: Դպրոցն ունի խմելու ջուր և կոյուղի: Կա ջեռուցման համակարգ /բաքսի/: Մարզադահլիճը զգում է տարբեր մարզական սարքերի և գույքերի կարիք: Վատ են ձևավորված մարզահրապարակները: Դպրոցի տարածքը շրջապատված է մետաղյա մաշված ցանկապատով, տարածքը ծառազուրկ է: Նկուղում վատ են կահավորված քաղաքացիական պաշտպանության ապաստարանները:

Համայնքում առկա է մեկ նախադպրոցական ուսումնական հաստատություն, Կուրթանի ՆՈՒՀ ՀՈԱԿ, 9 աշխատողով և 44սաներով: Քանի որ մանկապարտեզի շենքը գտնվում է անմխիթար վիճակում, այն տեղափոխվել է դպրոցի շենքի առաջին հարկի մի մասը:

Առողջապահական հաստատություններ

Համայնքում գործում է մեկ բուժկետ՝ մեկ բժշկով և երկու բուժքույրով:

2.3 Համայնքում իրականացվող ծրագրեր

Համայնքի վարչական տարածքում պետության կողմից գալիք հինգ տարիների համար նախատեսվող ծրագրերն անհայտ են:

2.4Համայնքի ֆնանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանասական կանխատեսումները

	ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ	2017	2018	2019	2020	2021
Ա.	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	45083,5	45187,9	47187,9	49187,9	50187,9
1.	Հողի հարկ	6220,8	6220,8	6220,8	6220,8	6220,8
2.	Գույքահարկ	3535,0	3600,0	3700,0	3800,0	3900,0
3.	Վարձավճար	2389,6	2400,0	2500,0	2600,0	2600,0
4.	Տեղ. տուրք	171,0	200,0	200,0	200,0	200,0
5.	Այլ եկամուտներ	80,0	80,0	80,0	80,0	80,0
6.	Մուտքեր հողի օտարումից	300,0	300,0	300,0	300,0	300,0
7.	Ընդամենը սեփ. եկամուտներ	12696,4	12800,8	14800,8	16800,8	17800,8
8.	Դոտացիա	32387,1	32387,1	32387,1	32387,1	32387,1
Բ.	ԾԱԽՍԵՐ	46086,6	46086,6	46086,6	46086,6	46086,6
1.	Կառավ. ապարատ.ծախսեր	27834,0	27834,0	27834,0	27834,0	27834,0
2.	Գյուղատնտեսություն	100,0	100,0	100,0	100,0	100,0
3.	Տրանսպորտային կապ	300,0	300,0	300,0	300,0	300,0
4	Բնակ.շինություն	1450,0	1450,0	1450,0	1450,0	1450,0
5.	Հանգիստ, մշակույթ, կրոն	1020,0	1020,0	1020,0	1020,0	1020,0
6.	Կրթություն	9502,0	9502,0	9502,0	9502,0	9502,0
7.	Սոցիալական պաշտպան.	3200,0	3200,0	3200,0	3200,0	3200,0
8.	Այլ խմբեր /պահուստային/	2293,5	2293,5	2293,5	2293,5	2293,5
9.	Շրջակա միջավայրի պաշտպանություն	120,0	120,0	120,0	120,0	120,0
10	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	267,0	267,0	267,0	267,0	267,0

2.5Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Կուրթան համայնքի առջև ծառացած են հետևյալ հիմնախնդիրները՝ Ազգաբնակչության 30%-ը գտնվում է սոցիալապես անապահով վիճակում: Համայնքի զարգացմանը խոչընդոտում են ներքոնշյալ գործոնները՝

1) Բիզնես միջավայրի բարելավման և ձեռնարկատիրության խթանմանը՝

.ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման դժվարությունը,

.բնակչության գործարար ոլորտի գիտելիքների պակասը,

. ֆինանսի բացակայությունը

2) Երիտասարդության ներգրավմամբ ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպման խոչընդոտող գործոններն են՝

մշակութային կյանքի պասիվությունըմշակույթի կենտրոնի ոչ լիարժեք վիճակը,գործազրկությունը,

3) Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությանը խոչընդոտող գործոն է գործազրկությունը,

4) ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսմանը խոչընդոտող գործոն է սպորտհրապարակի, մարզադահլիճի չկահավորված լինելը

5) Համայնքում բնակարանային շինարարության խթանմանը խոչընդոտող գործոն է համայնքաբնակների աղքատությունը,

6) Համայնքի բնակավայրերի կառուցապատման պահպանմանը խոչընդոտող գործոններն են՝

. համայնքի որոշ թաղամասերում կոյուղու բացակայությունը,

.խմելու ջրագծի և ջրի ներքին ցանցի քայքայված վիճակը,

.միջոցների սղությունը,

. որոշ հատվածներում փողոցային լուսավորության բացակայությունը:

7) Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը խոչընդոտող գործոններն են՝

.քաղաքացիական պաշտպանության գիտելիքների պակասը,

.սեյսմիկ գոտում գտնվելը,

. համայնքի բնակարանների 30-40% գտնվում են վթարային վիճակում

8) Գյուղատնտեսության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.ոռոգման ցանցի բացակայությունը,

. գյուղտեխնիկայի մաշվածությունը

9) Համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչընդոտող գործոններն են՝

.հեղեղատարների բացակայությունը,

.աղբամանների և աղբավայրի բացակայությունը,

9) Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող Կուրթան համայնքում՝ զբոսաշրջության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.հանգստյան տների և օթևանատների բացակայությունը

.հեռավորորությունը մայրաքաղաքից,

.գովազդի բացակայությունը,

.տուրիստական գործակալությունների հետ կապ չունենալը,

10) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանը խոչընդոտող գործոններն են՝ գործարար միջավայրի բացակայությունը,

.ձեռնարկությունների բացակայությունը,

.երիտասարդների միգրացիան,

11) Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.երիտասարդների չամուսնանալը,

.երիտասարդ ընտանիքների սոցիալապես պաշտպանված չլինելը,

.պետության կողմից աջակցության պակասը, աղքատությունը,

12) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանմանը խոչընդոտող գործոն է համայնքում համապատասխան պայմաններ չունենալը,

13) Համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով բարեգործության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքի երիտասարդների կամավորության պակասը,

.հանրային համախմբվածության և մասնակցության թույլ լինելը,

.տեղեկատվական տեխնոլոգիաներին չտիրապետելը:

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

1. Գյուղի աշխարհագրական դիրքը
2. Հուշարձանների և գեղեցիկ բնության առկայությունը
3. Էլեկտրաղացի, հիդրոէլեկտրակայանի, քարի արտադրամասի,ասֆալտի գործարանի, կաթի վերամշակման արտադրամասի առկայությունը
4. Խմելու ջրի առկայությունը և գազաֆիկացումը
5. Բարձրագույն և միջնակարգ կրթությամբ մասնագետների առկայությունը և մարդկանց հումորը
6. Հասանելի են բջջային կապի 2օպերատորները
7. Կարտոֆիլի մշակության բարձր կուլտուրան

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

1. Հակակարկտային կայանների բացակայությունը
2. Արոտավայրերի և խոտհարքների սակավությունը
3. Ուժեղ, սեյսմիկ գոտում գտնվելը
4. Միջնակարգ դպրոցի տարածքի ցանկապատի կառուցման խնդիրը
5. Մշակույթի կենտրոնի վերանորոգման ավարտման խնդիրը/ գրադարան, թանգարան/
6. Խմելու ջրի ներքին ցանցի վթարային վիճակը
7. Հնեվանքի վանքային համալիրի և Սուրբ Աստվածածին եկեղեցու՝ որպես հավատի տան բարեկարգման և բացման օրախնդիրը
8. Գյուղատնտեսական արտադրանքի ստացման բարձր ինքնարժեք և իրացման դժվարություններ

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Համայնքի աշխարհագրական դիրքը
2. Աշխատուժի առկայություն
3. Տուրիզմի զարգացման համար գեղատեսիլ կիրճի և նրա հարակից գեղատեսիլ տարածքի առկայություն, պատմական և մշակութային վայրերի առկայություն
4. Քարի և ավազի հանքավայրերի առկայություն
5.Կոոպերատիվների ստեղծում
6. Բերրի հողերի առկայություն

ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ

1.Տարերային աղետների վտանգ՝ երաշտ, կարկուտ, ցրտահարություն,
2. Երկրաշարժ, վթարային շենքերի առկայություն, արտագաղթ,
3. Սողանքներ, քարափների փլուզում
4. Գյուղմթերքների արտահանման դժվարություն, նվազող գներ, սպառման շուկաների դժվար հասանելիություն
5. Բնակչության ցածր աճ:
6. Հարկային և ոչ հարկային եկամուտների գանձման եկամուտներ,

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1 **ի՞նչ տեսլական ունի համայնքը ապագա տարիների համար,**

Կուրթան համայնքում գալիք հինգ տարիներին՝ ՀԶԾ իրականացման արդյունքում նախատեսվում է

1. Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում ,որի արդյունքում համայնքում կգործեն ձեռնարկությունների մասնաճյուղեր՝ մասնավորապես գյուղ մթերքների վերամշակման,քարի վերամշակման ձեռնարկություններ:
2. Զբոսաշրջության զարգացման համար նախատեսվում է համայնքում կառուցել հանգստյան գոտիներ, հյուրանոցային շինություններ:
3.Գյուղատնտեսության բնագավառում նախատեսվում է զարկ տալ կոոպերատիվային շարժմանը, արոտների ճանապարհներ կառուցում,արոտատեղերում մակատեղերի, կացարանների և ծածկոցների կառուցում:

4.Համայնքի բնակչության բնական և արհեստական աճ: Գործարար միջավայրի բարելավում, աշխատատեղերի ստեղծում, համայնքում ծնելիության և բազմազավակությունն խթանում՝ նորաստեղծ ընտանիքներին ֆինանսական օգնության տրամադրում:
5. Համանքի ճանապարհների և ենթակառույցների մասով նախատեսվում է որոշ փողոցների ասֆալտապատում /850քառմ/ , որոշ մասի շեբենապատում, ինչպես նաև ջրհեռացման առուների վերականգնում և մաքրում:

6.Երիտասարդության ներգրավմամբ նախատեսվում է ակտիվ մշակույթային և մարզական միջոցառումների կազմակերպում , մարզական և մշակույթային խմբակների ստեղծում:

7.Համայնքի բյուջեի եկամուտների ավելացման համար նախատեսվում է համայնքային հողերի վարձակալությամբ տրամադրում և օտարում՝ հասարակական և արտադրական կառույցների և առևտրի կետերի, հանգստյան գոտիների կառուցման համար:

8.Համանքում բնակարանային շինարարության խթանման բնագավառում նախատեսվում է երիտասարդ ընտանիքներին օժանդակություն փաստաթղթային, իրավական հարցերում և բարոյական աջակցություն:

9. Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսման բնագավառում նախատեսվում է սպորտային միջոցառումների , սպորտլանդիաների անցկացում, սպորտային առանձին խմբակների ստեղծում,միջհամայնքային մրցումների անցկացում:

10. Պետական պաշտպանության աջակցման բնագավառում նախատեսվում է ռազմա-հայրենասիրական միջոցառումների իրականացում, բանակային կյանքին վերաբերվող հարցերի լուսաբանում,զինապարտների պարբերական հաշվառում և զինկոմիսարիատների հետ փոխհամագործակցություն:

11. Համայնքի սոցիալական պաշտպանության բնագավառում նախատեսվում է սոցիալական նպաստների տրամադրում, ֆինանսական օգնության տրամադրում փարոս համակարգում չընդգրկված ,սակայն սոցիալապես ոչ բարվոք վիճակում գտնվող ընտանիքներին:Նախատեսվում է նաև բարեգործական կազմակերպությունների միջոցով որոշակի օժանդակություն /անասունների և գույքի տեսքով/:
12. Հաշմանդամներին հասարակական կյանքին մասնակցության խթանման բնագավառում նախատեսվում է համագործակցություն ,, Լիարժեք կյանք,, ՀԿ-ի հետ, հաշմանդամներին ընդգրկել զանազան հանձնաժողովների մեջ:Ստեղծել պայմաններ նրանց ազատ տեղա-շարժի համար/ սայլուղիների կառուցում և այլն:
13. Բարեգործության խթանման բնագավառում նախատեսվում է արտերկրում բնակվող մեր հայրենակիցներին պարբերաբար տեղեկացում համայնքի հասարակական կյանքին, խնդիրներին և լուծման ուղիներին: Լայնորեն լուսաբանել համայնքում կատարված ցանկացած բարեգործություն: Կազմակերպել մեծարման ցերեկույթներ: Համագործակցում բարեգործական կազմակերպությունների հետ,ստեղծել բարեգործ-ների անկյուն և լուսանկարների միջոցով լուսաբանել բարեգործների աշխատանքները և ստացված արդյունքները:

3.2Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

1. Համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարման նպատակն է համայնքային բյուջեի ավելացումը, համայնքային գույքի պահպանումը ,իրականացվող ծրագիրը նպա-տակ ունի համայնքային գույքի՝մշակույթի կենտրոնի գործարկմանը, մարզադահլիճի վերանորոգմանը և գույքով ապահովմանը :
2.Ակտիվ մշակույթային և մարզական միջոցառումները միտված են երիտասարդության ակտիվացմանը- վերանորոգված խաղասենյակների առկայությունը կնպաստի գիտելիք-ների ավելացմանը , հայրենասիրության բարձրացմանը, առողջ ապրելակերպի ու համայնքային մտածողության բարձրացմանը:

3. Համայնքի ճանապարհների պահպանման նշահագործման ծրագրերի արդյունքում կունենանք 3600քառ.մետր ասֆալտապատ փողոց , 3000 քառ.մետր բարեկարգ շեբենա-պատված ճանապարհ, 2000մետր վերանորոգված ջրհեռացման առու, մաքուր և գրավիչ համայնք՝ բնակվողների և զբոսաշրջիկների համար:
4.Աղետների ռիսկերի նվազեցման և քաղ. Պաշտպանության միջոցառումների շնորհիվ կապահովվի բնակչության անվտանգությունը և բնականոն կյանքի գործունեությունը:
5.Գյուղատնտեսության բնագավառի ծրագրերը նպատակ ունեն գյուղ մթերքների առատության,իրացման շուկայում մրցունակության բարձրացման , բնակչության սոցիալական և ֆինանսական վիճակի բարելավման, գյուղացիական տնտեսությունների եկամուտների աճ հնգամյակի ընթացքում 10-ից մինչև 50 տոկոս:
6.Զբոսաշրջության ծրագրերի նպատակն է բնակիչների սոցիալական և ֆինանսական վիճակի բարելավումը՝ նախատեսվում է եկամուտ ստացող տնային տնտեսությունների աճ 15-ից 40 տոկոսի չափով :
7. Համայնքի բնակավայրի կառուցապատման, բարեկարգման նպատակն է ունենալ փողոցային լուսավորության լապտերների ավելացում 110կետով ,ժամանակակից ենթակառույցներով և շինություններով մաքուր՝ աղբահարթակներով և աղբամաններով կահավորված համայնք, որտեղ աղբատար մեքենայով աղբը պարբերաբար հեռացվում է համայնքից:

4.Համայնքի զարգաճման ծրագրի ֆինանսավորումը

Պարտադիր խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի ֆինանսավորումը իրականացվում է /ըստ անձնագրերի/

1.ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ԿՈՒՐԹԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ – <<Վոլոդ Վիժն>> -ի, անհատ ձեռնարկատերերի, կազմակերպությունների և բնակիչների ֆինանսական միջոցների հաշվին

2.ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ,ԱՂԲԱՄԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ –իրականացվելու է համայնքի բյուջեի միջոցներով

3.ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ԿՈՒՐԹԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ-ՀԱԿԱԿԱՐԿՏԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՈՒՄ, ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ,ԿԱԹԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ, ՍԱՌՆԱՐԱՆԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ –իրականացվելու է պետական բյուջեի, համայնքի կողմից 1մլն դրամի ներդրմամբ, ինչպես նաև համայնքի աշխատուժի ներդրմամբ:

4. ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ, ԱՎՏՈԿԱՆԳԱՌԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ, ԴԱՇՏԱՄԻՋՅԱՆ ՃԱՆԱ-ՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ - իրականացվելու է է համայնքի բյուջեի և պետբյուջեի միջոցներով, ինչպես նաև մարզպետարանի կողմից

5. ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄ – իրականացելու է ՀՀ կառավարութ-յան, Քաղաքաշինության կոմիտեի, Լոռու մարզպետարանի միջոցներով

5. ՀՀԶԾ-ի մոնիթորինգը - իրականացվում է հարցումների և փաստերի ուսումնասիրության հիման վրա, որով գնահատվում է զարգացման ծրագրերի անձնագրերով նախատեսված ցուցանիշների իրական լինելը, ծրագրի իրականացման արդյունավետությունը, բնակչութ-յան սոցիալական վիճակի փոփոխությունը : Հսկվում է ծրագրի իրականացման ընթացքը: Յուրաքանչյուր ծրագիրի նպատակամբ իրականացված մոնիտորինգի ցուցանիշը նշված է մոնիթորինգի վերաբերյալ հավելվածում՝ ըստ տարիների և թիրախային արժեքների:

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր ԹԻՎ01

« ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ԿՈՒՐԹԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Զբոսաշրջության խթանում						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքի զբոսարջային գրավչության մեծացում և ներգնա զբոսաշրջության աճ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Զբոսաշրջությունից եկամուտ ստացող տնային տնտեսությունների աճ	5	7	8	10	12	15
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Բնակիչների գիտելիքների ավելացում զբոսաշրջության և բիզնեսի բնագավառում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Զբոսաշրջության բնագավառում շահագրգիռ բնակիչների աճ	5	10	12	15	18	20
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Զբոսաշրջային բիզնեսով հետաքրքրվող բնակիչների համար դասընթացների կազմակերպում: 1.2.Համայնքի գեղատեսիլ վայրերի մասին իրազեկման գովազդների իրականացում: 1.3 Համայնքի մոտակա տարածքներում հանգստի գոտիների ստեղծում 1.4 Տնային տնտեսություններին կից հյուրանոցային պայմանների բարելավում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0,0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 0,0դրամ Ընդհանուր բյուջեն՝0,0դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1.Համայնքում առկայություն պատմամշակույթային վայրերի առկայություն 3.Ձորագետ և Գարգառ գետերի միախառնման վայրում գեղատեսիլ կիրճի առկայություն, ամառը Սառցատնից բնական սառույցից օգտվում 4.Անհատ ձեռնարկատերերի շահագրգռվածություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	1.Ֆինանսական միջոցների հայթայթումը						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն ,առևտրի կետեր,անհատ ձեռնարկատերեր,համայնքի բյուջե,						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ- 2021թ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Կուրթան համայնքը ունի գեղատեսիլ վայրեր,պատմամշակութային կառույցներ: Կան շահագրգիռ կազմակերպություններ և անհատներ որոնք ցանկանում են ներդրումներ կատարել և կառուցել հանգստյան գոտիներ: Տուրիզմի աստիճանական զարգացման ընթացքում բնակչության կողմից տնային տնտեսություններին կից միկրոհյուրանոցային կառույցների ստեղծում և հյուրերի համար բավարար պայմանների ստեղծում:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր ԹԻՎ02

« ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակավայրի կառուցապատունը և բարեկարգումը						
Ծրագրի անմիջական նպատակ	Ունենալ լուսավոր և գեղեցիկ համայնք						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Փողոցային լուսավորության կետերի ավելացում	60	110				
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Լուսավորման կետերի ավելացում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Լուսամփոփների, հաղորդալարերի և հենասյուներ ձեռք բերում/ հատ/		50				
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 լուսամփոփների ձեռք բերում 1.2 հաղորդալարերի ձեռք բերում 1.3 հենասյուների ձեռք բերում 1.4 փողոցային լուսամփոփների տեղադրում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 500 000 դրամ Կապիտալ ծախսեր՝ 950000 դրամ Ընդհանուր բյուջեն՝1,45մլն.դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1.Ֆինանսական միջոցների առկայություն 2,Աշխատանքների կատարման պատրաստակամություն 3,Հենասյուների որոշակի քանակի առկայություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ռիսկեր չկան						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն , ,համայնք,						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ- 2017թ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրի իրականացման արդյունքում Կուրթան համայնքում նախատեսվում է բոլոր փողոցների լուսավորության ապահովում և ունենալ լուսավորված ու գեղեցիկ համայնք :						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր ԹԻՎ03

« ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ԿՈՒՐԹԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գյուղատնտեսության զարգացման խթանում						
Ծրագրի անմիջական նպատակ	Գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Գյուղատնտեսությունից եկամուտ ստացող տնային տնտեսությունների եկամուտների աճ%--ով	0	10	15	20	30	80
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Բնակիչների գիտելիքների ավելացում գյուղատնտեսության բնագավառում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Գյուղատնտեսության բնագավառում շահագրգիռ տնտեսությունների աճ%-ներով	0	30	40	50	70	100
	2. Բարձր արտադրողական և ժամանակակից գյուղ. տեխնիկայի ունենալը						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Բերքի անկորուստ հավաքման աճ%-ով	0	20	30	40	50	60
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1դաշնթացների կազմակերպում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Ֆինանսական միջոցների ձեռք բերում 2.2 Հակակարկտային կայանների ձեռք բերում 2.3 Կաթի սառնարանի ձեռք բերում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0,0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 1,0մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 1,0մլն դրամ.						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1.Ֆինանսական միջոցներ տրամադրող դոնոր կազմակերպության առկայություն 2.Համայնքում կոոպերատիվի առկայություն 3.մշակվող վարելահողերի առկայություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Դոնոր կազմակերպության կողմից չնախատեսված իրավիճակ						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն , համայնք						

Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ- 2021թ
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նախատեսվում է կոոպերատիվային շարժման դերի բարձրացում, հակակարկտային կայանների ձեռք բերում,որի շնորհիվ բերքի կորոստը կկրճատվի և բնակչության եկամուտները կավելանան 50% և ավելի

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր ԹԻՎ04

« ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքային ճանապարհային ենթակառույցների պահպանություն						
Ծրագրի անմիջական նպատակ	Բարեկարգ ճանապարհներ և վերանորոգված ջրհեռացման առուներ ունենալը						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Բարեկարգ ճանապահի ավելացում քառ. մետր	0	0	900	900	900	900
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Վերանորոգված ջրհեռացման առուներ ունենալը						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Վերանորոգված ջրհեռացման առուների ավելացում գմ	0	150	0	0	0	0
	2. Բարեկարգ ճանապարհ ունենալը						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարների շեբենապատում և հարթեցում քառ.մետր	0	200	250	300	350	400
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1նախագծի պատվիրում 1.2ֆինանսական միջոցների հայթայթում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 անհրաժեշտ նյութերի ձեռք բերում 2.2 ճանապարհների շեբենապատում 2.3 Ներհամայնքային ճանապարհների եզրերին տեղադրել աղբամաններ 2.4 Կանգառի կառուցում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1,8մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 40մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 41,8մլն դրամ.						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1. ֆինանսական միջոցների առկայություն 2,շեբենի առկայություն 3. Աշխատուժ 4. Մեխանիզացիա						

Ծրագրի հիմնական ռիսկերը	Անձրևներ , սելավներ
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ- 2021թ
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքը կունենա մաքուր և բարեկարգ ճանապարհներ

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր ԹԻՎ05

« ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄ »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	խրախուսել բնակչության մշակութային կյանքի զարգացումը						
Ծրագրի անմիջական նպատակ	Մշակույթի կենտրոնում ունենալ բարվոք գրադարան, թանգարան, հանդիսությունների դահլիճ և մարզադահլիճ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Վերանորոգված գրադարան և թանգարան	0	2	0	0	0	0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Կահավորված և ջեռուցվող մարզադահլիճ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	2	4	5	3	2,83
	2. Վերանորոգված հանդիսությունների դահլիճի և մարզադահլիճի						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	հանդիսությունների դահլիճի և մարզադահլիճի վերանորոգում	0	1	0	0	0	0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1ձեռք բերել մարզադահլիճի կահավորման համար անհրաժեշտ գույք 1.2 ձեռք բերել մարզադահլիճի ջեռուցման համակարգ 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 ձեռք բերել նստարաններ/ 420նստատեղ/, վարագույրներ 2.2 ձեռք բերել գրադարակներ գրադարանի և թանգարանի համար						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 16,83մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 17,83մլն դրամ.						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1.ֆինանսական միջոցների առկայություն 2,Նախագծի առկայություն 3.Աշխատուժ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Դրամական միջոցների ձեռք բերում						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ- 2021թ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նախատեսվում է համայնքային մշակույթի կենտրոնում մարզադահլիճի, թանգարանի և գրադարանի վերանորոգում և կահավորում, որի արդյունքում երիտասարդությունը կհաճախի տարբեր միջոցառումների, կավելանա ընթերցողների և թանգարան հաճախողների քանակը:						